

**ԱՐՔԱ վճարային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից
իրականացված անկանխիկ վճարումների համար հետվճար տրամադրելու
նախագծի հաճախ տրվող հարցերի վերաբերյալ**

Հարց 1: Ո՞րն է նախագծի (միջոցառման) նպատակը:

Պատասխան: Միջոցառման հիմնական նպատակն է

- խթանել Հայաստանի Հանրապետությունում անկանխիկ վճարումների իրականացումը,
- բարձրացնել քաղաքացիների ներգրավվածությունը ժամանակակից ֆինանսական գործիքների կիրառման մեջ,
- ապահովել ազգային վճարային համակարգի սուլվերենությունը:

Հարց 2: Ովքե՞ր են հանդիսանում միջոցառման շահառուներ:

Պատասխան: Միջոցառման շահառուներ են հանդիսանում այն ֆիզիկական անձինք, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանք և ունեն իրենց անվամբ բացված բանկային հաշիվ, որին կցված է ԱՐՔԱ վճարային քարտ, առաջիկայում նաև ԱՐՔԱ co-badge վճարային քարտ:

Հարց 3: Ի՞նչ ժամկետով է նախատեսված միջոցառման իրականացումը:

Պատասխան: Միջոցառումը կիրականացվի 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարված գործարքների համար: Հետվճարների վճարումները կլինեն համապատասխանաբար 2026 թվականի փետրվար ամսից մինչև 2027 թվականի հունվար ամիսը:

Հարց 4: Ե՞րբ և ինչպե՞ս է վճարվելու հետվճարը:

Պատասխան: Հաշվետու ամսվա վճարումների դիմաց հետվճարները վճարվելու են մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսի 25-ը, այն բանկի հաշվին, որով կատարվել է հաշվետու ամսվա ընթացքում հետվճարի ենթակա վերջին գործարքը: Բանկը հետվճարի գումարը կմուտքագրի շահառուի ԱՐՔԱ կամ ԱՐՔԱ co-badge քարտերի հաշիվներին կամ բացառիկ դեպքերում ոչ քարտային ընթացիկ հաշվին՝ նախապատվությունը տալով վերջին գործարք կատարած քարտի հաշվեհամարին: Առաջին հետվճարները կվճարվեն մինչև 2026 թվականի փետրվարի 25-ը՝ 2026 թվականի հունվար ամսին կատարված անկանխիկ գործարքների հիման վրա:

Հարց 5: Ինչպե՞ս է իրականացվում նախագծի ֆինանսավորումը:

Պատասխան: Միջոցառման շրջանակում տրամադրվող հետվճարի ընդհանուր գումարի 50%-ը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից, իսկ մնացած 50%-ը՝ թվով 15 ՀՀ առևտրային բանկերի կողմից: Սույն նախագծում Արմենիան Զարդ ՓԲԸ հանդես է գալիս՝ որպես ԱՐՔԱ քարտային համակարգի օպերատոր և շահառուների կողմից կատարված անկանխիկ գործառնությունների դիմաց հետվճարի տրամադրման համար տվյալների մշակման և փոխանցման միասնական կենտրոն: Ավելին՝

Պետության մասնաբաժինը սույն նախագծում չի կազմում ընդհանուր վճարվող հետվճարի միայն 1%-ը, այլ՝ շահառուների համար վճարվող եկամտային հարկը նույնպես վճարվելու է Պետության կողմից, ինչի արդյունքում շահառուներն իրենց համապատասխան բանկային հաշիվներին կստանան կատարված անկանխիկ գործառնությունների դիմաց զուտ 2% հետվճար:

Հարց 6: *Ի՞նչ տեսակի վճարային քարտերով իրականացված վճարումների դիմաց է հետվճարը հաշվարկվելու:*

Պատասխան: Հետվճարները հաշվարկվելու են միայն ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված ԱՐՔԱ վճարային քարտերով իրականացված գործարքների դիմաց, այդ թվում՝ այլ վճարային համակարգերի հետ համատեղ թողարկված (co-badge) վճարային քարտերի դիմաց:

Հարց 7: *Ո՞ր բանկերից և ինչ պայմաններով կարելի է ձեռք բերել ԱՐՔԱ վճարային քարտեր:*

Պատասխան: Արքա վճարային քարտեր հնարավոր է ձեռք բերել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թվով 13 առևտրային բանկերից.

- ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
- ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
- ԱՅԴԻ ԲԱՆԿ ՓԲԸ
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
- Արդշինբանկ ՓԲԸ
- Արցախբանկ ՓԲԸ
- ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա ՓԲԸ
- ԵԿՈԿԱԲԱՆԿ ԲԲԸ
- Ինեկոբանկ ՓԲԸ
- Կոնվերս Բանկ ՓԲԸ
- ՀԱՅԵԿՈՆՈՍԲԱՆԿ ԲԲԸ
- Յոնիբանկ ԲԲԸ
- Ֆասթ Բանկ ՓԲԸ

Քարտի տրամադրման և սպասարկման պայմանները սահմանվում են յուրաքանչյուր բանկի կողմից առանձին:

Հարց 8: *Ո՞ր գործարքներից է հաշվարկվում հետվճարը*

Պատասխան: Հետվճարը հաշվարկվում է ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված ԱՐՔԱ վճարային քարտերով ՀՀ տարածքում գրանցված իրավաբանական անձանց մոտ տեղադրված ֆիզիկական կամ վիրտուալ ՊՈՍ տերմինալներով ապրանքների կամ ծառայությունների դիմաց կատարված վճարումներից:

Հարց 9: Որքա՞ն է կազմում հետվճարի չափը:

Պատասխան: Հետվճարի չափը կազմում է 2% և հաշվարկվում է 1,000 ՀՀ դրամը գերազանցող վճարումներից: Մեկ գործարքի համար սահմանված է 6,000 ՀՀ դրամ՝ որպես հետվճարի առավելագույն շեմ, իսկ մեկ անձի համար հետվճարի ամսական առավելագույն շեմը սահմանված է 60,000 ՀՀ դրամ:

Օրինակ

Եթե շահառուն իրականացնում է 500,000 ՀՀ դրամի միանվագ գնում ԱՐՁԱ քարտով, ապա հետվճարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

- 500,000 ՀՀ դրամի 2%-ը կազմում է՝ 10,000 ՀՀ դրամ
- Զանի որ հաշվարկված 2%-ը գերազանցում է մեկ գործարքի համար սահմանված առավելագույն շեմը (6,000 ՀՀ դրամ), շահառուին տվյալ գործարքի համար կվճարվի 6,000 ՀՀ դրամ հետվճար:
- Այս գումարը կներառվի շահառուի տվյալ ամսվա ընդհանուր հետվճարի մեջ՝ մինչև ամսական առավելագույն շեմի (60,000 ՀՀ դրամ) լրանալը:

Հարց 10 Որո՞նք են այն գործարքները, որոնց համար չի տրամադրվում հետվճար:

Պատասխան: Հետվճար չի ձևավորվում հետևյալ դեպքերում.

- տեղեկատվության, կապի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարներ,
- ՀՀ պետական և համայնքների բյուջեների օգտին կատարվող վճարումներ,
- բարձր ռիսկային վաճառակետերում կատարված գործարքներ («Մեծահասակների համար նախատեսված բովանդակության», «Ծանոթությունների կայքերի և հարթակների», «Խաղատների և խաղային ծառայությունների», «Կրիպտո փոխանակման, կրիպտո դրամապանակների և այլ կրիպտո ծառայությունների», «Թվային ֆայլերի պահեստավորման և հեռակա օգտագործման ծառայությունների», «Ազարտային խաղերի», «Բարձր ռիսկային ֆինանսական առևտրային հարթակների», «Հեռախոսային մարքեթինգային ծառայությունների», «Ավտոմատ երկարաձգվող բաժանորդագրությունների», «Թանկարժեք մետաղների և քարերի առուվաճառք» սպասարկման կետերը, բացառությամբ՝ Դեղատների),
- ֆինանսական կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների դիմաց ֆինանսական հաստատության օգտին գանձվող ցանկացած վճարումների և գործարքների,
- ԱՐՁԱ նվեր և մեկանգամյա օգտագործման համար նախատեսված քարտերով կատարված գործարքների,
- Ստացված հետվերադարձը, փոխհատուցումը և հետգանձումները: Ընդ որում, հետվերադարձների, փոխհատուցումների և հետգանձումների հիմքում ընկած գործարքների դիմաց նախկինում վճարված հետվճարները նվազեցվելու են ընթացիկ ամսվա ընթացքում վճարվելիք հետվճարներից:

Հարց 11 Ի՞նչ է տեղի ունենում եթե գնումը հետ է վերադարձվել

Պատասխան: Եթե գնումը չեղարկվել կամ վերադարձվել է, այդ գործարքի գծով հետվճարը հանվում է հաջորդ ամսվա վճարվելիք հետվճարից:

Հարց 12 Ի՞նչ է տեղի ունենում, եթե հաշիվը փակ է

Պատասխան: Եթե շահառուի բանկային հաշվի փակ լինելու կամ այլ պատճառով պայմանավորված հետվճարի գումարը չի փոխանցվել, շահառուն իրավունք ունի հետվճարը ստանալու համար 6 ամսվա ընթացքում դիմել իրեն սպասարկող բանկ՝ գործող այլ բանկային հաշվին հետվճարի գումարը ստանալու համար:

Հարց 13 Արդյո՞ք կենսաթոշակային քարտերով կատարված վճարումները ներառված են այս միջոցառման ծրագրում

Պատասխան: Այո: Կենսաթոշակային քարտերը, եթե դրանք ԱՐՔԱ կամ ԱՐՔԱ co-badge քարտեր են, ներառված են հետվճարի ծրագրում: Այս ծրագիրը գործում է անկախ գործող 20% հետվերադարձի ծրագրից և կիրառվում է դրան լրացուցիչ:

Հարց 14. Եթե շահառուն ունի հարցեր հետվճարի հաշվարկի կամ իր հաշվին փոխանցված գումարի վերաբերյալ, ու՞մ պետք է դիմի

Պատասխան: Շահառուն հետվճարի հաշվարկի, փոխանցման և իր հաշվին մուտքագրված գումարի վերաբերյալ պարզաբանման եկթակա հարցեր ունենալու պարագայում պետք է դիմի իրեն սպասարկող բանկին:

Հարց 15 Հնարավո՞ր է ԱՐՔԱ քարտերը կցել Google Pay կամ Apple Pay դրամապանակներին

Պատասխան: Ներկայումս Ընկերության կողմից իրականացվում են համապատասխան աշխատանքներ ԱՐՔԱ քարտերի կցումը Google Pay և Apple Pay դրամապանակներում ապահովելու համար: Ընկերության կանխատեսումով դա հնարավոր կլինի ապահովել տարվա երկրորդ կեսից:

Հարց 16 Հնարավո՞ր է ԱՐՔԱ քարտերով իրականացնել անհպում (contactless) գործարքներ

Պատասխան: Այո: ԱՐՔԱ քարտերը հնարավոր է օգտագործել անհպում վճարումներ իրականացնելու համար:

Հարց 17 Հնարավո՞ր է պատվիրել ԱՐՔԱ թվային քարտեր

Պատասխան: Թվային քարտի թողարկումը նախատեսվում է իրականացնել Google Pay և Apple Pay դրամապանակներում ԱՐՔԱ քարտերի կցման հնարավորությանը զուգահեռ:

Հարց 18 Ե՞րբ է պլանավորվում ԱՐՔԱ co-badge քարտերի թողարկումը

Պատասխան: ԱՐՔԱ co-badge քարտերի թողարկումը պլանավորվում է 2026 թվականի առաջին եռամսյակում: Առաջիկա ամիսներին նախատեսվում է թողարկել UnionPay վճարային համակարգի հետ co-badge քարտեր, իսկ Mastercard վճարային համակարգի հետ co-badge քարտերի թողարկման մասով աշխատանքները գտնվում են պայմանագրի կնքման փուլում: Արմենիան Զարդ ՓԲԸ բաց է և ողջունում է բոլոր միջազգային քարտային վճարային համակարգերի հետ համագործակցության առաջարկները:

Հարց 19 Ինչո՞ւ է ԱՐՔԱ-ն այս ծրագրի շրջանակում համագործակցում ՀՀ Կառավարության հետ

Պատասխան: Ծրագիրն ունի երկու գերնպատակ՝ խթանել անկանխիկ վճարումների աճը և ապահովել ազգային վճարային համակարգի սովորեցնությունը: ԱՐՔԱ-ն, հանդիսանալով

Հայաստանի Հանրապետության ազգային վճարային համակարգը, ապահովում է երկրում անկանխիկ վճարումների ենթակառուցվածքի անընդհատությունը և անվտանգությունը, ինչպես նաև բոլոր մասնակիցների միջև փոխգործելիությունը, իսկ վճարային համակարգի սուվերենության ապահովումը հանդիսանում է Ընկերության ռազմավարական առաքելություններից մեկը:

Հարց 20: Ինչո՞ւ է հետվճարը հաշվարկվում միայն ԱՐՔԱ վճարային քարտերով կատարված վճարումների դիմաց

Պատասխան: ՀՀ-ում վճարային սուվերենության ապահովման առաքելությունից ելնելով՝ որոշում է կայացվել հետվճարները տրամադրել միայն ԱՐՔԱ վճարային քարտերով իրականացված անկանխիկ գործառնություններից, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային քարտային վճարային համակարգերի ունեցած փորձը և ազատ մրցակցային միջավայրի ապահովման ուղղությամբ որդեգրած քաղաքականությունը՝ որոշում է կայացվել, որ ոչ միայն ԱՐՔԱ քարտերով կատարված անկանխիկ գործառնությունների դիմաց կտրամադրվեն հետվճարներ, այլ նաև միջազգային քարտային վճարային համակարգերի հետ համատեղ թողարկված co-badge քարտերով իրականացված անկանխիկ գործառնությունների դիմաց: